

ԳՐԱՏԵՍՈՒԹ ՀԱՄԱՉԱՍՎԻ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻ ԱԽՋԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆԸ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնակազմ գրադարանում բացվեց մի նոր սրահ, որի դռան վրայի ապակյա և ցուցանակի վրա մեսրոպյան ու ուկնատառերով կարդում ենք. «Պրոֆ. Համազասպ Ասատորի Համբարձումյանի գրադարանային ֆոնդ»: Այսուղի պահպանվում է գիտության վաստակավոր դորժի անձնական գրադարանը, որը մեծ հետաքրքրություն է ներկայացնում ոչ միայն այն գիտնականների համար, որոնք ցանկանում են ուսումնասիրել անգամի պրոֆեսորի կյանքը ու ստեղծագործությունը, այլ նաև բոլոր նրանց համար, որոնք դրադվում են անտիկ բանասիրությամբ և մշակույթով:

Մեծ գիտնականների և ականավոր գրողների անձնական գրադարանների ուսումնասիրությունը նպաստում է այդ մարդկանց մտավոր հետարբերության շրջանակների որոշմանը, պարզաբանում է, թե այդ մարդիկ գիտության ո՞ր բնագավառներով են հետաքրքրվել, որոշակի գաղափար է տալիս, թե ո՞ր հեղինակների ո՞ր երկերը և ո՞ր լեզուներով դրբերը հատկապես հրապարել են նրանց, որոշ շափով օգնում է պարզելու նաև այդ մարդկանց փոխադարձ կապերը իրենց ժամանակակից հեղինակների հետ և այլ հարցեր:

Այս այս տեսակետից էլ մեծ հետաքրքրություն է ներկայացնում բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Համազասպ Ասատորի Համբարձումյանի անձնական գրադարանը, որն իր ցանկությամբ՝ հետմահու ամբողջությամբ նվիրված է գիտությունների ակադեմիայի հիմնակազմ գրադարանին:

Հ. Ա. Համբարձումյանը ծնվել է 1880 թ. Հայաստանի Թասարգելար դյուքսը: Ազգընական կրթությունը ստացել է Ներկանում, այնուհետև ուսանել է Թիֆլիսի Ներսիսյան զպրոցում, ապա՝ Մոսկվայի Լազարյան հետարքանում: Ռասման ժարավը հազեցնելու և մասնագիտական կրթություն ստանալու նպատակով նա ստեղագիտվում է Պետերբուրգ և 1908 թ. ավարտում է Պետերբուրցի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը: Այսուհետև, ավելի քան քառորդ դար նա աշխատել է Թիֆլիսում որպես իրավաբան և ուսուցիչ:

Համազասպի կինը, Հոհիսիմի Սահմակի Համբարձումյանը պատմում է, որ գեռն ուսանող ժամանակ /1904 թ./, նա ունեցել է մեկ պահարան գրականություն, այսինքն շուրջ Հարյուր հիսուն հատոր գիրք: Այդ գրադարանը հիմնականում հարստացված է վերջին երեք տասնամյակների ընթացքում, երբ գրականագետը անհուն սիրով և հոգածությամբ համայրել է իր անձնական գրադարանը, նրա ամեն մի միավորը ձեռք բերելով հիմնականում նրեանի, Մոսկվայի: Ենին զրադի և Առվետական Միության այլ քաղաքների բուկինիստական խանութներից:

Գրադարանը բաղկացած է 2214 դրագարանային միավորից, այդ թվում՝ 385 գիրք հայերնեն, 1521 գիրք ռուսերնեն, 307 գիրք օտար լեզուներով (լատի-

ներեն, իտալիկնեն, Հունարեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլիկնեն, չեխերեն) և 1 զիբը ուկրաիներեն լեզվով, Աշխարհի 10 լեզուներով համարված զրականությունը պահպանվել է Համբարձումյանների ընտանիքան սեփական պահպանում, մեծ ժամամբ Համբագասպ Համբարձումյանի աշխատասենյակում (Շոյուրականի առանձնատան առաջին հարկում): Գրադարանի գրքերը, որոնց վրա դրված է ուշամագասպ Համբարձումյանի դրքերից վերտառությամբ կնիքը, պահպանված են շափառանց խնամքով, այնպես որ լեն կորցրել իրենց կազմի շրջադիրունքը: Ամբողջ պրականությունը պահպանված էր ապակյա դուներով փակվող զրապահարանների մեջ: Գրադարանի գրքերից օգտվելը հեշտացնելու նպատակով զրականությունը դասավորված էր բառ բռվանդակության և բառ լեզուների: Համբեմատարար ավելի շատ օգտագործվող գրքերը (Հանրագիտարաններ, զանազան բառարաններ, տեղեկատու հրատարակություններ և այլն) տեղադրված էին անմիջապես իր աշխատասեղանի մոտիկ պահպանում, իսկ անոնիկ զրականության գլուխ զործոցները միշտ էլ գտնվել են իր զրանդանի վրա:

Համբարձումյանին հետարրերել են զիտության տարրեր բնագավառուների վերաբերյալ զրքերը, որոնք վկայում են, որ նրա մտահորդունը շատ լայն է հետիւ Սակայն պետք է հատկապես նշել այն ուշագրավ Հանգամանքը, որ Հ. Համբարձումյանը մեծ հուսնդով ուսումնասիրին է հասարակագիտական առարկաները, չեայած այն փաստին, որ նրա ֆունդում կա հարյուրից ավելի զիբը՝ թժկության, ֆիզիոլոգիայի, մաթեմատիկայի, աստղագիտության, ֆիզիկայի և այլ բնական զիտությունների վերաբերյալ:

Համբագասպ Համբարձումյանի անձնական զրադարանում իրենց արժանի տնօն ունեն մարքսիզմի կրասիկները (Կ. Մարքսի «Կապիտալը», «Փիլիսոփայության ազրատությունը» զրքերը, Ֆ. Էնգելսի «Սոցիալիզմի զարգացումը ուսուպիշյայից զեպի զիտություն» աշխատությունը, Վ. Ի. Լենինի «Օրգկերրա և այլն):

Համբարձումյանը ուսանելով իրավարանական ֆակուլտետում և հետազյում աշխատելով որովեա իրավաբան, ինչ խոսք, որ հատուկ սեր է տածել զեպի իրավագիտությունը և այդ է պատճառը, որ նրա ֆունդում գտնվում են Հատկապես ուսւանելու լեզվով ավելի քան 80 զիբը իրավարանական զանազան հարցերի վերաբերյալ: Նրա իրավարանական զրքերի մեջ խոշոր տեղ են զրավում իրավունքի տեսության մասին զրքերը, Հատկապես՝ իրավունքի բնուածության վերաբերյալ: Միաժամանակ նա խոր հետարրերություն է ցուցաբեր նաև սոցիալ-տնտեսական և բաղարական հարցեր շոշափող զրքերի նկատմամբ, որոնց շնորհիվ 1925 թ. Հ. Համբարձումյանը դասախոսություններ է կարդացել և ներդրացի պետական Համբարձումյանում, ֆինանսական-էկոնոմիկական ինստիտուտում, արդյունարերական-տնտեսական դասընթացներում: Նրա ֆունդում այդ առարկայից վերաբերյալ կան շուրջ 100 կապիտալ էրկեր՝ Հիմնականում ուսւանելու լեզվով:

Հ. Ա. Համբարձումյանը մեծ հետարրերություն է ցուցաբերել փիլիսոփայական և կրոնա-բարյական բովանդակություն ունեցող զրքերի նկատմամբ: Այդ էն վկայում նրա ֆունդում գտնվող ժանրակշիռ շատ զրքեր, ինչպես, օրինակ, հին հույն փիլիսոփա Պլատոնի և զրոդ-բարույացեա Պլուտարքոսի երկերը, XVIII դարի ֆրանսիական փիլիսոփայության խոշոր ներկայացուցիչը՝ Պիդրոյի, XIX դարի ֆրանսիացի հայտնի փիլիսոփա, պատմաբան և քննադատ

Հիպայոլիտ ՏԼՆի և ուրիշների վիլիսով փայտական առանձին աշխատությունները՝ Գերմանական զամական վիլիսով փայտությունը ներկայացված է Գ. Հեղեկի, Լ. Ֆոյերբախի և այլ վիլիսով փաների աշխատություններով, իսկ Ռուսաստանի հասարակական մտքի պատմությունը ներկայացված է Գ. Վ. Պլեխանովի և շատ ուրիշների երկերով:

Համբարձումյանը սիրել է կարդայ նաև սոցիոլոգիայի հարցերի վերաբերյալ պրականությունը: Նրա անձնական դրադարանում զանվում են անցյալի ականավոր մտածողների ստեղծագործությունները, սոցիալիստ-ռուսական թուժաս Կամպանիալլայի հայտնի Ամերիկ բազարը պրի երրորդ՝ 1923 թ. ուսական հրատարակությունը, Թոմաս Մորի ու Նրա անտոպիանի մասին զբրցեր և այլն: Այստեղ են գտնվում Կարլ Կառուցեան, Սեն-Միմոնի, Ռոբերտ Օուենի, Պյոտր Կրոպոտիկինի և ուրիշ հեղինակների գրքերը:

Համբարձումյանը առանձին ուշադիմյամբ է հայուել պատմական գրականությանը: Նրա գրազարանում մեծ տեղ են գրազեցեում հին Արևելքի, Հռենաստանի, Հոռմի, Միջին դարերի, Ռուսաստանի, արտասահմանյան երկրների նոր և նորագույն պատմության վերաբերյալ գրքերը: Հայ ժողովոյի պատմության վերաբերյալ բազմաթիվ գրքերից արք Հիշատակել Միքայել Չամչյանցի Հայոց պատմության եռհատորյակը, Մովսես Խորենացու, Աղիշեի, Ա. Գարագայանի, Հ. Մաեանցանի գրքերը, Issaverdens-ի «Histoire de l'Arménie» պրի 1888 թ. մենատիկյան հրատարակությունը՝ հարյուրից ավելի նկարազարդումներով, ինչպես նաև ուրիշ գրքեր:

Հ. Ա. Համբարձումյանը ճանարիված է նաև իր գրական-հասարակական գործունեթյամբ, Յիթասարդ հասակում և զրել է բանաստեղծությունները թիֆիսում ակտիվորնեն մասնակցել է Հովհաննես Բուժմանյանի գլխավորած Կոմիսարի Հայ գրողների ընկերության աշխատանքներին՝ որպես այդ ընկերության բարտուղար: Նրա անդրանիկ բանաստեղծությունների գրքույկը՝ «Ալրյուն Էշեր խորագրով» լույս է տեսել թիֆիսում 1903 թ., 1904 և 1905 թվականներին Ա. Գիտերբուրգում տպագրվում ևն մենունենի Էշերում և «Հպարտ հոգու երգերից» վերևագրերը՝ կրող բանաստեղծությունների ժողովածուները: Այնուհետև, Էշեննայում հրատարակվում ևն Նրա սերկերի ժողովածուները: Ա. Վ. և Գ. Հատորները 1927—1929 թթ.: 1903—1956 թթ. բանաստեղծությունների հատքերից՝ սերերը իրերի մասին վերևագրով լույս է տեսել Երևանում 1956 թ. Բացի Հիշատակյաներից, քիրթվածներից ու թարգմանական բանաստեղծությունների այլ ժողովածուներ լույս են տեսել Հայերին և ուստեղն լազմաներով:

Բանաստեղծ Հ. Ա. Համբարձումյանը շատ է սիրել գեղարվեստական գրականությունը և իր աշխատանքով ժամբարելոված օրերին իսկ ժամանակ է զարդ կարդալու բանաստեղծական ու վիպասանական գրքեր: Նրա անձնական գրադարանում բավական լրիվ ներկայացված են Հայ, ուսա և արտասահմանյան գրականության կլասիկների երկերը, ինչպես նաև զանազան ժողովածուներում պատմական հայության մասին կատակերգությունները և այլ հրատարակությունները:

Հայ գրականությունից երա գրադարանում ևն զանվում հաշատուր Արովյանի, Ղազարոս Աղայանի, Արսեն Բաղրատունու, Ակսել Բակունցի, Գրիգոր Նարեկացու, Գրիգորիս Աղմամարցու, Խերենիկ Դմիթրյանի, Պետրոս Պուրյանի, Նաիրի Զարյանի, Անելիման Զորյանի, Վահան Թոփովլեսի, Հովհաննես Թումանյանի, Ավետիք Բահակյանի, Ծուշանիկ Կորդինյանի, Հակոբ Հակոբյանի, Հայկանենս Թէկուրանցու, Հովհաննես Հովհաննենի հայությանի, Առուացանի, նահա-

պես Թուլակի, Նադաշ Հովհաննի, Նար-Դոսի, Ամրատ Շահաղիզի, Հովհաննես Երբագի. Սղիշե Չարենցի, Ռափայել Պատկանյանի, Հակոբ Պարոնյանի, Պերճ Պողոսյանի, Մայաթ-Նովայի, Սարմենի, Թիգամ Սարյանի, Սիսիի, Գարդիկ Մուսուկյանի, Վեսպերի, Վահան Տեղյանի, Բաֆֆո, Վրթանեա Փափադյանի, Երվանդ Օսյանի և ուրիշ գրողների ու բանաստեղծների երկերը:

Արտասահմանյան զրականությունից նրա զրագարանում կան Ա. Քանթեի, Վ. Երբագիրի, Զ. Բայրունի, Հ. Հայնի, Վ. Գյոթեի, Զ. Ֆրկենսսի, Վ. Լուսոյի, Զ. Լուսոնի, Ժ. Մոլիերի, Հ. Իրաննի, Ա. Ֆրանսի, Ռ. Տագորի, Ռ. Ռուլաննի, Հ. Բարյուսի, Ֆ. Երիկի, Պ. Թերամենի, Հ. Հառուտմանի, Է. Պոլի, Մ. Մետերինդի և ուրիշ շատ հղինակների զրբերն ու բազմահատոր շքեղ հրատարակությունները՝ մեծ մասամբ սուսերեն, ինչպես նաև հայերն ու եվրոպական լեզուներով:

Ուսև զրականությունը նույնպես ամենայն հոխությամբ երբկայացված է այս զրագարանում: Այսակա կարելի է գտնել Ա. Պուշկինի, Մ. Ֆուլանի, Է. Շուտովի, Խ. Ա. Խելանի, Վ. Վ. Գոնչարովի, Ա. Ա. Գրիգորյովի, Ի. Ա. Տուրգենևի, Ֆ. Ի. Տյուտչյանի, Վ. Վ. Մայկովի, Ա. Վ. Տոլստոյի, Ա. Վ. Կոլտովի, Ի. Ա. Նիկիտինի, Ա. Ա. Ջեմի, Ա. Ն. Ակուխտինի, Ի. Ա. Կոխովի, Վ. Յա. Բրյուսովի, Ա. Ա. Բրոկի, Մ. Ա. Մալովի-Եշեղբինի, Ա. Ա. Գորկու, Ա. Ա. Սահնինի, Վ. Վ. Մայակովսկու, ինչպես նաև իրեն ժամանակակից շատ արձակագիրների ու պոետների երկերը:

Համբարձումյանի զրագարանում առանձին ուշագրությամբ հավաքված են հայ և ուսև հեղափոխական դեմոկրատներ Միքայել Խալրանյանի ու Նիկոլայ Զերեխյանի, Այրանադր Գերցենի ու Ախմասրիկոն Բելինսկու զրբերը:

Ուշագրավ է նշել նաև արևնյան զրականության նկատմամբ երա անհուն սեր ու հետաքրրությունը: Համբարձումյանի զրագարանում գտնվում են աշխարհառուակ զրոցներ Յմար Խայամի, Մուշարրիխ էղ-Դին Սադիի, Խիզամի Դյանշինի, Ֆիքուսու ստեղծագործությունների ժողովածուները: Նրա շատ սիրած հղինակներից է նզել Օմար Խայամը: Անսովոր եռանցի տեր դիտնականի, իր կյանքի վերջին օրերին, նորից ուսումնասիրելով Խայամի քայլակները, աշխատել է թարգմանել մի քանիսը՝ ինքը ևս զրելով քայլակները կյանքի, համույթի և հավերժության վերաբերյալ՝ փիլիսոփայական վառ հայացքներով յի տողերով. որոնք պետք է համարել նրա զրական լաստակի վերջին նմունները:

Համագասու Աստատուրի Համբարձումյանը չափածո թարգմանություններ է կատարել Պորկուց, Լերմոնտովից, Գյոթեից, Էցցար Պոյից, Ղերիենից, Բայրուից, Հայենից, Ենլիից և Հանրահայր ուրիշ բանաստեղծներից:

Սակայն մեծ զիտնականը անշափ ոգեսրությամբ և համարակությամբ սիրել է հունա-հռոմեական ստրկատիրական հասարակության փիլիսոփայություններ ու պատմությունը, արվեստն ու զրականությունը: Նա սիրել է անտիկ աշխարհի բազմակողմանի զարգացած փիլիսոփաներին ու մռածողներին, պատմաբաններին ու զեղարգիստական խորի վարպետներին: Անտիկ բանասիրության ասպարեզում է, որ նա առաջնել աւրի է ընկեռում և զառնում հանաշված հոմերացիս: Աշխատանքի անսովոր եռանդով նա ուսումնասիրել ու հարցատել է անտիկ աշխարհը՝ իր սեփական ժողովրդի զրական դռւարենքի շափ սիրել ու խանգարովիլ է հունական զրականության հագույք զրայիր:

Հուշաբաններով՝ Համերօսին մերագրությունը պիտի հական ու ոլղիսական պուեմներով, որոնք որպես խոշոր դյուցազներություններ՝ իրենց պատմողական բարձր արժիսատել և էպիկական վեհ ռանդուի խորապես ողեցնչելի են նրանց երկրպագության Արդարք, շատ հասկանեալի է իրեն Հունական հերոսական էպոսի նկատմամբ Համբարձումյանի անհուն սերը, երբ մենքը նկատի հեր ունենում այն հաւելամասները, որ ոչ մի ժողովրդի էպոս այնպիսի ազդեցություն լի ունեցել համաշխարհային գրականության վրա, ինչպես իրեն հոյցերի զյուցագերբությունը, և առաջին հերթին, իշարէն, անդիսականներ ու ոլղիսականներ։ Հետեւպես, Հունական մշակությունը, յազգին և ժամանակորապես գրականությանը բարձր ձանոթ զիտականներ չեն կարող անուարբեր լինել, իր կողմբց մեծ սիրով ու խորասույզ կերպով ուսումնասիրված առեղծագործությունների նկատմամբ։

Իրեն հունարինի քաջ հմուտ Հ. Համբարձումյանը բնագրից թարգմանել է Հունական գրամատուրիցիայի խոշորագույն գրական գեմքերի վյուխ զործոցները՝ Էսքիզնի ու Պրամեթեսոր շզմազմառ, Մափուկեսի ու Եղիս Արբան և ունեատիզնեն, Էվրիփոդիսի ու Էֆելան և Քապուի տպականարցը, որոնք ունից ողբերգակներ բնոշանուր վերնադիրը կրող մաղովածուի մեջ լույս հն ընծայցի Հաւագեանրատի կողմից 1950 թ.։ Իրեն հունարին բնագրից Հ. Համբարձումյանի շափածո թարգմանությամբ իրար հանեց լույս են տևակ եան Հոմերոսի շնիփականը՝ 1955 թ. և ոլղիսականը՝ 1958 թ.։ Իսկ 1964 թ. երեսնում հրատարակի է Մատուրամենիր Հոմերոսի մասին երա միհածավագ մենազրությունը, որը երկար տարիների անխոնց աշխատանքը արդյունք է, և որտեղ բազմակողմանիուրեն բնեության են առնելիք Հոմերոսի պուեմները՝ գրական, պատմական, աղջազրական, հոգիրանական առումով։ Հայ Հոմերագիտության մեջ ուշագրագ մի երկ է դա, որտեղ բացահայտված են եան Հոմերոսի պուեմների լինգվական ու պատմական երկույթների և հայ ժողովրդի պատմության, կենցաղի ու լեզվի միջև զանգուղ առնելությունները աշխար զրութ համեմատություն է կատարված եան Հոմերական բժրունամների էության և հայկական նապատից մշակությի միջև իրավագիտական, էմինիկական, ժապանեարանական և այլ անհանկյուններ։

Դյուցագներության և ժողովրդական բանահյուսության նկատմամբ նրա հետարրության ապացուցյուն են Հանդիսանում գրադարանուն պանվող տարրեր ժողովրդակների էպոսների հրատարակությունները, Հետիաթների ու ժողովրդական երգերի, ասացվածքների ու առակների ժողովածուները և բնոշանրատին ժողովրդային բանահյուսության բնույթ ունեցած առեղծագործությունները։

Խաչար Հոմերագիտանի և անտիկ գրականության հմուտ մասնացների գրադարանին նվիրուած մեր այս հակիմ ակնարկը թիրի կլինի, Եթի մեր համամատեր շարտահայտներ նվիրուացի առաջին բաղադրակիրմ ժողովուրդների խոշոր ներկայացուցիչների՝ իրեն Հունաստանի ու Հոռոմի գիլիտոսփաների, պատմարանների, քեարերգունների, գրամատուրքների երկիրի այն նոխ հայքածովյի մասին, որը ամենայն բարեխզմանը՝ զիրք առ զիրք ձմեռ է բերել Համբարձումյանը և համարի և իր գրադարանը, այն դարձենելով յուրահատուկ բանահյուսության հիմք հայտարակությամբ մի համարբռական կոլեկցիա։ Արդարք, հույս և հոսմեացի ին շատ Հեղինակների երկիրով հարուստ է նրա գրադարանը, Այստեղ կան իրեն Հունաստանի վելիտափարական մարք բաղմաթիք ներկայացուցիչների երկերի աարբեր հրատարակություններ։ Գրադարանուն կարի է հանդիպել Միւրութը 5-5.

լիթի դպրոցի և ըրկայացուցիչներ Պյութագորոսի և Հերակլիտի փիլիսոփայական հայացքների մասին զրականության, մեր թվարկություններ տառ Վ-ի գարերի ականավորագույն փիլիսոփայական Պյութանի ու Արքատուտերի երկրին, Դևմոկրիտի ու Սոկրատի փիլիսոփայական տեսությունների վերուժության մասին Ծրատարակությունների, Ընդլայնիցմի դարաշրջանի փիլիսոփայական բացիկուրի ու Պյութինի, ինչպես նաև փիլիսոփայական տարրեր ուղղությունների ակեպտիկների ու ստորկների փիլիսոփայական տեսակետները բացահայտող շատ զրբերի Գրադարանում իրենց արժանի տեղն ունեն նաև հռոմեական փիլիսոփայության Ներկայացուցիչների դիտական մատերիալիստական աշխարհայացքի նախագուշակ Լուկրեցիոսի լուսավորչական, պղուտիկական ու փիլիսոփայական երկերն ու Մարկոս Տուլյոս Ցիցերոնի հոնորական զրբերը, ինչպես նաև Լուցիոս Աննեոս Աննեոսի ու Մարկոս Ազրելիոսի բարոյախոսական-փիլիսոփայական դորձերի վերաբերյալ զրականություն:

Համապատասխ Ասատուրի Համբարձումյանի գրադարանում մենք գտնում ենք անտիկ զրականության հայտնի հեղինակների շատ զրբեր: Այստեղ են անտիկ ողբերգության հիմնադիր, ողբերգության իսկական հայրը Էսքիլսի, Աթենքի ողբերգական մեծ պուն Սոփոկլեսի, որիմի փիլիսոփա, ողբերգական բանաստեղծ էվրիպիդեսի Էրկերը Իրենց երկրի տարրեր Ծրատարակություններով զրադարանում արժանի տեղ են զրավել նաև երգիծանքի վարպետ Արիստոֆանը, հոռմեական ժամանակաշրջանի ամենահայտնի հունական զրող, մեծ ժողովրդականություն վայելող Պլուտարքոսը, բեղմնավոր երգիծարան Լուկիանոսը և ուրիշներ: Հասկանչական է եղան, որ Համբարձումյանի զրբերում կան Հոմերոսի սիլինականից 7 և սիլինականից 4 օրինակներ՝ հայերնեն, ուստի են և ստար լեզուներով, ինչպես նաև Երկու տասնյակից ավելի զրբեր Հոմերոսի ու երա ստեղծագործության մասին:

Մեծ բախտ միջնակից է Հ. Ա. Համբարձումյանին 1959 թ. որպես զրուաշրջիկ այցելել Հոլանդիա և Հունաստան: Շմանապարհորդական մտորումները խորազիրը կրող զրբում (Երևան, Հայկական ՍՍՀ ԳԱ Հարաբեկյանի թանգառ, 1963) և նկարագրել է ոչ միայն որոշ դեպքեր ու իրականության առանձին երկույթներ, այլև ջանացել է բացահայտել իր մոտեցումը դեպքերին: Հունական ճարատարապետության հայտնի հուշարձանների մասին իր ուղեգրական մտորումներում ևա շեշտը զետեւ է հատկապես այդ հուշարձանների հասարակական ու պատմական նշանակության վրա: Հունիան Համբ վկայությունների ու անխոս դիլատակների կույտերի մասին Համբարձումյանը պատմում է կենդանի լեզվով և խոսում ողեշնչումով:

Հին հունական և արևմտաեվրոպական զրականությունների միջև փոխանցիկ սղակ հանդիսացող Հոոմեական զրականությունը նույնպես ուշադիր հոդատարությամբ համարված է Համբարձումյանի զրադարանում: Այստեղ կան Հոոմեական կայսրության՝ մօղոսուսի դարի Հոոմեական ուղղություններում և էսերգիի մասնակիությունը և թվինստուս Հուակեկի լիբրիկական պատմները, էլեղիկ զննդղուն պուն Պուրիիուս Օմիդիուս նազոնի բանաստեղծությունների ու բալլագների ժողովածուները, Մարկոս Վալերիոս Մարցիալիսի և էպիգրամներու, ինչպես նաև Կատոնի, Տակիտուսի և շատ ուրիշների երկերը:

Համբարձումյանի կյանքում իր յուրահատուկ զրոշմեն է զրել նրա հնություրությունը արվեստի նկատմամբ: Արդարեւ, Համաշխարհային արվեստի

Նկատմամբ նրա սերը չի սահմանեավակյել միայն զրքեր կարդալով ու հավաքելով: Նկարապարզումներով և վերաբառադրություններով հարուստ, տարրեր ժողովածուելով, հին և նոր արդիստի վերաբերյալ դրերի հետ մեկտեղ նա մեծ գումարներ զնարկելով ձևոր է քերել նաև քանդակագործական ու նկարչական ինքնատիպ ստեղծագործություններ, որոնցով գարդարել է իր աշխատանելյակը (որինակ՝ Հոմերոսի բրոնզյա կիսանդրին, Ցիցերոնի մարմարյա դիմացակը, մայստարական ու քարակերությա այլ յուղանկարներ), այդ բոլոր նորյան և միիրել է գրադարանին:

Հայատանում պիտական կադրերի պատրաստման գծով Համբարձումյանի գործունեություններ են վկայում այս ավառուեֆերատները, որոնք նա ստացել է դիմերտացիաներ պաշտպանողներից և դիմական խորհուրդներից՝ Հատկապես յանախիրության վերաբերյալ ԽՀարկե, զրադարձանում կաև նաև մակարություններով գրքեր, որոնք ստացված են թնձերներից, բարեկամներից և ապարել երկրների զիանականներից (Հովսեփ Կուսիկյանից՝ Մոսկվա, Խան Այասուի կիրայանից՝ Պրադա և ուրիշներից), որոնք չի նշան խորին հարզանքի և սիրոս, և անհուն երախտանքով, սիոջորադույն սիրով ու մեծարանքով զրքեր են նվիրել; օմնծարդոց որովնեսորին ու օխորոր հայացետինեւ Առանձնացես հիշատակության արժանի է ակադեմիկոս Արտաշես Լիպարիանի Շահնշանի մտահղացումը, որը Համբարձումյանին նվիրել է Կրիտոր Նարեկացու ոՄատյան ողբերգության զիրքը. ներզիր լրացուցիչ Երկու մազաղաթյա թէրթիրով, նկարադարդուած՝ հայկական մանրանկարչություննից վերցրած և մուշներով, ծննդամ՝ հետեւյալ մակաղությամբ. ուամազասու Ասատուրի Համբարձումյանին՝ նրա ծննդյան 80-ամյակի ասթիվ. Արտ. Շահնշան:

Ապակյա պետք է նշել, որ զրադարանի զրքերի մեջոց մեծամասնությունը նա ինքն է զնել, Այս են վկայում հարյուր երեսունից ամելի հնատիզ և Հազմազյուտ հրատարակությունները, որոնք մեծ արժեք են ներկայացնում: Ամելարդ չենք համարում այսուեղ թիվի մի քանի հնատիզ զրքեր, որոնք հազզակյուտ և արժեքավոր տպագրություններ են: Հայատառ հնատիզ ամենաճին դիբը, որ նրա ֆոնդում կա, զա 1705 թ. Ամստերդամում Թովմաս Վանանդեցու տպարանում հրատարակված ժամադիրըն է «Ժամակարդութիւն հնատակաց աշօթից Եկեղեցեաց Հայատանեաց»: Երրորդիցս ի լոյս ածեալ հայցմամբ ինդրոյ Պուղաչեցի Աղակարի որդու Պարու Թասաւոյն խորապրով: Բացի պրոֆ. Համագասապ Համբարձումյանի անձնական զրադարձանում զանվոր այս օրինակից, այդ դրբից Հայատառանում կա ևս երկու օրինակ՝ մեկը Ալ. Մշասիկյանի անվան պետական հանրապետական գրադարանում, իսկ մյուսը՝ զրուկանության և արինասիթ թանգարանի Անարքանդյանի ֆոնդում: Համբարձումյանի զրադարձանում գտնելով ուսուերեն լեղզով Յ հետարի պրեբեր հրատակակած ժամանակում կայուն պահպանում է ԱՆԻ դարում, 4-ր Ս. Պետերբուրգում, իսկ 1-ր՝ Մոսկվայում: Զատար լեզվով ամենահնատիզ զիրքը 1504 թ. Աննեստիկում լույս տեսած Վերդիիուսի «Երկերա» է: Պետք է նշել, որ զրադարձանում երկու տասնյակ զիրք կա ստար լեզուներով, որոնք լույս են տեսել ԱՄ դարում: Դրադարձանում կա աև Հարյուրից ավելի հնատիզ զիրք, որոնք լույս են տեսել ԱՄ և ԱՆԻ դարում: Ամստերդամում, Հոնդունում, Փարիզում, Էստոնիայում և Սվորոպյանի այլ բաղադրելու հնագույն տպարաններում:

Հ. Համբարձումյանի դրադարանում շատ անեղան թիվ էն կազմում հանդեսնոր, բեղամենը կա 10 հայերն և 13 ոռուերն հանդես Անդ Հայտնի է, որ անդանի դիտնականը հետաքրքրությամբ և կանոնավորապես հետեւմ էր ընթացիկ մասուրին, սակայն նրա կողմից չեն պահպանվել ոգարրերական հրատարակությունների հավաքածուները: Պետք է նկատի ունենալ նաև այս հանդամանքը, որ անշուշտ նա չէր կարող քավարարվել միայն իր դրադարանի գրքերով և իր բազմաբնույն աշխատանքների համար հաճախակի դիմում էր մեր երերի խոշոր գրադարաններին, որոնք իրենց ֆոնդերը լայնորեն տրամադրում էին անհազ ընթերցողին: Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնակազմ գրադարանի պարտաճակալ ընթերցողներից և կանոնավոր հանախողներից էր անվանի գիտնականը, որը այցելում էր գրադարան իրեն ՀՀ ամբարքություններին ժանթանքայու համար:

Ինչպես տեսանք, իր կազմով և բովանդակությամբ Հ. Ա. Համբարձումյանի գրադարանը շափազանց բազմագան է և բացառիկ ինքնատիպ: Այն դրաբերը որոնք բնարել, ձեռք է բերել և հավաքել է գիտության վաստակավոր գործիք, ընորոշում են նրա լայն մտահորիզոնը և ատեղծագործական ակտիվ դրամունքությունը:

Ցանկալի է, որ գիտական ու համարակական գործիչների, գրողների ու արվեստագետների անձնական դրադարանները, որոնցով Հարուսա են Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հիմնակազմ և Ալ. Մյասնիկյանի անդամ պիտական հաերասպետական գրադարանները, ինչպես նաև Հայկական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության դրականության և արվեստի թանգարանը, ձևուամուխ լինեն անձնական դրադարանների դրականության արաւամատիկ և այբբենական ցանկերի հրատարակության գործին՝ առանձին գրքերի ձևով: Որոնք ավելի լրիվ պատկերացում կտան այդ անձնավորությունների կյանքի և դրամունքության մասին՝ անշուշտ ավելի հանդամանորեն:

Իրեն ամբողջովին նվիրելով հայ մշակույթին, բազմագաստակ Համբարձումյանը եղավ նրա համեստ ու անխօնչ մշակը, վեց տասնյակ տարիներից ավելի տասնամս առեղծագործական այդ գործունեության մէջ էր նա գտավ իր կյանքի ողջ իմաստը: 1965 թ. փետրվարի 2-ին գախճանվեց նա՝ 85 տարեկան հասակում՝ իր հետ տասնյուով գրական-թարդմանշական և դիտական-ստեղծագործական աշխատանքի շատ ծրագրեր, սակայն իր ժողովրդին ժառանգելով անփական նոխ գրադարանը, որպեսզի նոր սերունդները օգտվեն այդ գրքերից՝ իրենք ևս օգտակար ժառայրություն մատուցանեն հայ դարավոր մշակույթի զարգացման նվիրական գործին: